

ՄՈԴՈՒԼ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՄԵԹՈԴԻ ՄԱՆՐԱՄԱՍՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ

MODULE 2: A DEEP DIVE INTO FEW PUBLIC PARTICIPATION METHODS

Մոդուլը ներկայացնում և վերլուծում է գործընթացներում կարևոր դերակատարների բացահայտման մասնակցային մոտեցումները: Այն ներկայացնում է արտահայտվելու տարբեր մեթոդներ՝ բացահայտելու դերակատարների տարածական հարաբերությունները բնության և շրջակա միջավայրի հետ:

Սլայդերը և տեքստը՝ Մարիա Գարսիա-Մարտին
Խմբագիրներ՝ Տաթև Հարոյան, Սիրանուշ Հարությունյան, Գոհար Շահինյան
Խորհրդատուներ՝ Քլաուդիա Բիլինգ, Ալեն Ամիրխանյան
Տեքստը կարդաց Հարություն Դադուրյանը
Վիդեոն պատրաստեց Արգիշտի Ազիզյանը
Լեզուներ՝ հայերեն և անգլերեն
Հրատարակման տարի՝ 2021 թ.

This module explores and analyzes participatory approaches for recognizing key actors. It presents methods of varied ways of expression to reveal actors' spatial relationship with nature and local environment to increase deliberation and empowerment.

Slides and scripts by: Maria Garcia-Martin
Editors: Tatev Haroyan, Siranush Harutyunyan, Gohar Shahinyan
Advisors: Claudia Bieling and Alen Amirkhonian
Narrator: Harutyun Daduryan
Editing and Post Production: Argishti Azizyan
Publication Year: 2021

Սլայդ 1

Մոդուլ 2՝ Հանրային մասնակցության մի քանի մեթոդի մանրամասն ուսումնասիրում:

Մոդուլը ներկայացնում և վերլուծում է գործընթացներում կարևոր դերակատարների բացահայտման մասնակցային մոտեցումները: Այն ներկայացնում է արտահայտվելու տարբեր մեթոդներ՝ բացահայտելու դերակատարների տարածական հարաբերությունները բնության և շրջակա միջավայրի հետ:

Սլայդ 2

Առանց տեքստ

Սլայդ 3

Մոդուլն ավարտելուց հետո պատկերացում կկազմեք՝

- Մասնակցային մոտեցումների մասին, որոնք կիրառվում են իրական պայմաններում մասնակցային ծրագիր իրականացնելիս կարևոր դերակատարների և նրանց հարաբերությունների բացահայտման համար:
- Այն մոտեցումների մասին, որոնք հնարավորություն են տալիս բացահայտել, թե ինչպես են մարդիկ արժեվորում բնությունը և իրենց շրջակա միջավայրը, ինչպես նաև այդ մոտեցումների կարևորությունը:
- Համայնքների և շրջակա միջավայրի միջև եղած տարածական հարաբերությունների վերլուծության մոտեցումների և կարևորության վերաբերյալ, ինչը կնպաստի տարածքների պլանավորման վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելուն և կնվազեցնի հողօգտագործման հետ կապված տարբեր շահերի հնարավոր բախումները:
- Պատկերների օգտագործման միջոցով շահագրգիռ կողմերին արտահայտվելու հնարավորություն ընձեռելու և գործընթացում նրանց գիտակցությունն ու լիազորություններն ավելացնելու կարևորության և մոտեցումների վերաբերյալ:

Գործիքների ցանկը և մոտեցումները ավելի համակարգված կերպով ներկայացված են Մոդուլ 1-ում, որի թեման է մասնակցային մեթոդները: Այս մոդուլում մանրամասնորեն կուսումնասիրվեն շրջակա միջավայրի պլանավորման մեջ հաճախակի կիրառվող մի քանի մոտեցումներ և գործիքներ:

Սլայդ 4

Այս մոդուլը ներկայացնում է չորս տարբեր մեթոդներ՝ մասնակցային մոտեցումներ կիրառելու համար: Յուրաքանչյուր մեթոդ անդրադառնում է մասնակցային հետազոտության մի կարևոր բաղադրիչի և լուսաբանում է այն օրինակով: Այդ մեթոդներն են՝

1. Կիրառելով շահառուների քարտեզագրման մեթոդը՝ ունենալ մասնակիցների բավարար ներկայացվածություն:
2. Ազատ թվարկման կամ Freelistig-ի մեթոդն

Slide 1

Module 2: A Deep Dive Into A Few Public Participation Methods

This module explores and analyzes participatory approaches for recognizing key actors. It presents methods to shed light on actors' spatial relationship with nature and local environment to increase deliberation and empowerment.

Slide 2

N/A

Slide 3

After completing the module you will have gained insights into the importance and approaches for the following:

1. Recognizing key actors and their relationships within a given sustainability challenge in a real world setting addressing issues of power.
2. Understanding how people value nature and their local environment.
3. Analyzing spatial relationships between communities and their local environment to support informed land-planning decisions and reduce potential conflicts between different land-use interests.
4. Allowing stakeholders to express themselves using visual images in an impactful way and to increase deliberation and empowerment.

A more systematic list of tools and approaches are provided in Module 1: Overview of Participatory Approaches. In this Module, we will dive deeper into a few approaches and tools frequently used in environmental planning.

Slide 4

This module provides an overview on how to operationalize participatory approaches by presenting 4 different methods. Each method addresses an important aspect of participatory research and is illustrated with an example.

1. Achieving adequate participant representation through the use of stakeholder mapping methods
2. Eliciting values through freelistig methods

օգտագործելով վերհանել արժեքներ:

3. Կիրառելով մասնակցային քարտեզագրման մեթոդը ներառել տարածական բաղադրիչը:
4. Մասնակիցներին թույլ տալ տարբեր ձևերով ինքնարտահայտվել՝ կիրառելով լուսանկարների միջոցով արտահայտվելու մեթոդը:

Այս մոդուլը կազմված է 4 բաժնից. յուրաքանչյուր բաժնից հետո կա առաջադրանք, որը միտված է խթանելու ուսումնառությունը:

Սլայդ 5

Առաջին բաժնում կուսումնասիրենք տրված կայունության մարտահրավերների շրջանակներում կարևոր դերակատարների և նրանց հարաբերությունների բացահայտման մասնակցային մեթոդները:

Սլայդ 6

Առաջին բաժնի կառուցվածքն է՝

1. Շահառուների քարտեզագրման և սոցիալական ցանցի վերլուծության կարևորությունը
2. Շահառուների վերլուծություն. ներածություն
3. Net Map գործիք. ինչպե՞ս կիրառել:
4. Net Map գործիք. օրինակ
5. Գործնական կիրառություն

Սլայդ 7

Տարածքի և բնական ռեսուրսների կառավարումը հավաքական գործողություն է, որը ներառում է մի քանի դերակատարներ (ինչպիսիք են տեղական օգտագործողները, տարածքները կառավարողները, բիզնեսները և քաղաքականություն մշակողները): Յուրաքանչյուր դերակատար կամ դերակատարների խումբ բնական ռեսուրսների կամ լանդշաֆտի նկատմամբ տարբեր մոտեցումներ ունի, որը պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են սեփական փորձը, գիտելիքները, ռեսուրսի օգտագործումից և հասարակական ու մշակութային խմբից կախվածությունը: Արդյունքում լանդշաֆտի կառավարման տեսանկյունից հաճախ շահերի բախում է տեղի ունենում, և հազվադեպ է հնարավոր լինում, որ իրավիճակն ընդունելի լինի երկուստեք:

Կայունություն ապահովելու նպատակով կառավարման մեջ արդյունավետ մասնակցություն ունենալու համար անհրաժեշտ է տարբեր դերակատարների համաձայնությունը և համագործակցությունը: Տարբեր արժեքներ, կարիքներ և շահեր հաշվի առնելը կարևոր է ոչ միայն կառավարման պլանի օրինականությունն ապահովելու և բնական ռեսուրսների օգտագործման ժամանակ սոցիալական անարդարությունից խուսափելու համար, այլ նաև գործընթացում ներառված տարբեր դերակատարների համագործակցությունն ապահովելու համար:

3. Including a spatial component through participatory mapping methods
4. Allowing varied ways of participant expression through the use of photovoice

The module is divided into 4 sections with breakpoint activities in between to enhance learning and engagement.

Slide 5

In this section, we will become familiar with participatory methods for recognizing key actors and their relationships to a given sustainability challenge.

Slide 6

To quickly summarize, the following approach is taken to in the section:

1. Importance of conducting a stakeholder mapping and social network analysis
2. Introduction to stakeholder analysis
3. How to develop a Network Map (or Net Map)
4. An example of a Network Map
5. Discussion of the Practice

Slide 7

Management of land and natural resources is a collective act that involves several actors (i.e. local users, land managers, business and policy makers). Each actor or group of actors has a different relationship with a natural resource or landscape. This is determined by aspects such as personal life experiences, knowledge, dependence on the use of the resource, and the socio-cultural group the actor belongs to. Often this results in conflicting interests and management of the landscape/resource, and rarely are win-win situations possible.

Successful interventions in the management for sustainability require the consensus and collaboration of the different actors. Consideration of different values, needs and interests is important not only to ensure the legitimacy of the management plan and to avoid reinforcing social injustice in the use of the natural resources, but to guarantee the cooperation of the different actors involved in the process.

Եթե բոլոր կարևոր դերակատարները ներկայացված են գործընթացում և ուշադրություն է դարձվում որոշումներ կայացնելու դինամիկային, ապա մասնակցային հետազոտության մեթոդները հզորեցման և համաձայնության միջոցով կարող են խթանել համագործակցությունը:

Այդ իսկ պատճառով, տարածքների կառավարման և կայունության մարտահրավերներին անդրադառնալիս անհրաժեշտ է ներգրավել գործընթացի շահագրգիռ կողմերին և հաշվի առնել կայացված որոշման հետևանքները:

Բայց շահագրգիռ կողմերին որպես անկախ դերակատարներ համարելով ամբողջական պատկեր չենք ստանա: Կարևոր է նաև հասկանալ և դիտարկել, թե ինչպես են իրենք կապված միմյանց հետ և սոցիալական ցանցերի հետ: Նույնիսկ եթե մենք ֆորմալ սոցիալական ցանցերի՝ ասոցիացիաների, կազմակերպությունների մաս չենք կազմում, մեր ամենօրյա գործողություններն իրականացնում ենք որոշակի ցանցերի շրջանակներում (աշխատանքային շրջանակ, ընտանեկան շրջանակ, մտերիմների շրջանակ): Թե՛ ֆորմալ և թե՛ ոչ ֆորմալ ցանցերը կարևոր են:

Եթե հավաքական կառավարմանը միտված մասնակցային գործընթացում այդ ցանցերը հաշվի չառնվեն, ապա մենք կաշխատենք ոչ թե իրական պայմաններում, այլ մի արստրակտ աշխարհում՝

- կաշխատենք միայն պաշտոնապես ինստիտուցիոնալացված ցանցերում,
- չենք լուծի իշխանության բաշխման որևէ խնդիր,
- չենք խթանի այն փոփոխությունը, որն անհրաժեշտ է, որպեսզի մարդիկ համագործակցեն՝ ավելի ցանկալի արդյունքին հասնելու համար:

Մասնակցությունը պետք է տարանջատել և՛ ֆորմալ, և՛ ոչ ֆորմալ իրական ու արդեն գործող ցանցերից: Հարաբերությունները պետք է փոխել այնպես, որ իշխանությունն ավելի հավասարապես վերաբաշխվի: Այլ կերպ ասած, այս ցանցերը պետք է թույլ տան համագործակցել և հասնել նպատակներին:

Սլայդ 8

Աշխարհն անհնար է ներկայացնել 1:1 ճշգրտությամբ, հնարավոր չէ համայնքի յուրաքանչյուր անդամին ներառել մասնակցային գործընթացի մեջ, քանի որ անհնար է դիտարկել անդամների բոլոր ցանցերը և իրենց միջև առկա կապերը:

Շահագրգիռ կողմերի և սոցիալական ցանցերի վերլուծությունների տեխնիկայի կիրառման նպատակն է «հասկանալ, թե ովքեր են հիմնական դերակատարները և որոնք են նրանց միջև եղած կապերի տեսակները, որոնք կարևոր են քննարկվող խնդրի համար»:

If all relevant actors are represented in the process and attention is paid to the power dynamics, participatory research methods can catalyze collaboration through empowerment and consensus.

Therefore, addressing land management/sustainability challenges require taking into account and involving people that have a stake in the process and in the outcome of the decision. These are the stakeholders.

However, merely considering the stakeholders as independent actors does not provide the full picture. It is also important to understand and take into consideration how they relate to each other, to the social networks. Even if we are not part of formal social networks (associations, organizations), we all carry out our daily activities around some networks (work networks, family networks, proximity networks, hobby networks). Both formal and informal networks are important.

If a participatory process for collaborative management does not take these networks into account, this means we are not working in a real world setting, but, instead we are working within an abstract world. We are working without solving any power distribution problems or fostering the change needed for people to cooperate towards a more desirable outcome.

Participation needs to part from both formal and informal, real and already working networks, and work to transform the relationships in a way where power is redistributed in a more equitable manner; in a way that instead of preventing transformation towards achieving the community objectives, these networks allow cooperation and achievement of the goals.

Slide 8

It is impossible to have a 1-to-1 representation of the world. You cannot involve every single member of a community in the participatory process, as you cannot consider all the networks and linkages between its members.

Stakeholder and social network analysis techniques aim at “recognizing who the key actors are and the types of connections between them, relevant to the issue at stake.”

Շահագրգիռ կողմերի վերլուծությունը վերաբերում է գործիքակազմին, որն օգտագործվում է շահագրգիռ կողմերի բացահայտման և նկարագրության համար՝ ելնելով նրանց հատկություններից, միմյանց հետ ունեցած հարաբերություններից և տրված խնդրի կամ ռեսուրսի վերաբերյալ իրենց ունեցած հետաքրքրությունից:

Այսպիսով, հավաքական կառավարման որևէ ծրագրի շրջանակում շահագրգիռ կողմերի վերլուծություն իրականացնելը թույլ է տալիս անդրադառնալ ստորև բերված հարցերին՝

- Որո՞նք են ամենաազդեցիկ դերակատարները, ի՞նչն է նրանց ազդեցիկ դարձնում և որո՞նք են նրանց օրակարգերը:
- Ո՞ր հարաբերությունները պետք է խթանել:
- Արդյո՞ք կան մարզինալացված դերակատարներ, ինչպե՞ս է հնարավոր նրանց գտնել և հզորացնել:
- Ինչպե՞ս մեծացնել համագործակցությունը և հաղորդակցությունը, ո՞ր դերակատարները կարող են օգնել հաղորդակցության հարցում:

Սլայդ 9

Շահագրգիռ կողմերի քարտեզագրման և սոցիալական ցանցերի վերլուծության համար կան մի քանի մոտեցումներ: Մոտեցումների ընտրությունը կախված է համատեքստից, բայց գործընթացում կարող ենք դիտարկել երեք հիմնական քայլ՝

1. Շահագրգիռ կողմերի բացահայտում
2. Շահագրգիռ կողմերի դասակարգում
3. Նրանց միջև հարաբերությունների ուսումնասիրում

Սլայդ 10

1. Շահագրգիռ կողմերի բացահայտումը հնարավոր է իրականացնել տարբեր ընթացակարգերի միջոցով: Այն կարող է հիմնված լինել խնդրի և համայնքի վերաբերյալ փորձագետի ունեցած տեղեկատվության վրա կամ էլ մեդիայի և գրավոր աղբյուրների սպառիչ վերլուծության վրա:

- Այն հնարավոր է իրականացնել մասնակցային պայմաններում՝ համայնքի բնակիչներին հարցնելով, թե կոնկրետ խնդրի հարցով ում կարող են դիտարկել որպես դերակատար: Դրան կարող է հետևել ձնագնդի էֆեկտով կարծիքների հավաքագրումը:
- Կամ էլ այն հնարավոր է իրականացնել աշխատաժողովների և ֆոկուսային խմբերի շրջանակներում, որտեղ կիրավիրվեն մի քանի դերակատարներ՝ միասին քննարկելու և քննարկվող խնդրի համար դերակատարների ցանկ կազմելու համար: Սա սովորաբար շարունակական և կրկնվող գործընթաց է. այսինքն՝ քանի դեռ վերլուծությունը շարունակվում է, հավելյալ շահագրգիռ կողմեր են առաջ գալիս:

2. Շահագրգիռ կողմերի բնութագրման և դասակարգման մեթոդները:

Stakeholder analysis refers to “a range of tools for the identification and description of stakeholders based on their attributes, interrelationships, and interests related to a given issue or resource”.

Therefore, using stakeholder analysis in a collaborative management project allows addressing questions such as:

- Who are the most influential actors, what makes them influential, what are their agendas?
- Which relationships should be fostered?
- Are there marginalized actors? How can they be reached and empowered?
- How to increase cooperation and communication? Which actors can aid communication?

Slide 9

Stakeholder mapping and social network analysis are context dependent, but we can consider 3 main steps common to all:

1. Identifying stakeholders,
2. Categorising stakeholders, and
3. Investigating the relationships between them.

Slide 10

1. Identifying stakeholders can be done in different ways. It can be based on the expert's knowledge of the issue and the community, or on an exhaustive analysis of media and written sources. It can be done.

- In a participatory setting by interviewing people from the community about which actors they think need to be considered, or can be executed by a snow-ball sampling procedure, which basically means people you talk to refer others and those people in turn refer others and so on.
- The collection of names can be done through workshops, focus groups, and structured or semi-structured interviews.
- Stakeholder identification is usually an iterative process, meaning that additional stakeholders are added as the analysis continues.

2. To characterise and classify stakeholders we need a set of criteria by which will organise the identified

Այս մեթոդի քայլերն են՝ դասակարգել շահագրգիռ կողմերը՝ ըստ մի շարք չափորոշիչների: Օրինակ՝ շահագրգիռ կողմերը կարող են դասակարգվել ըստ իրենց հիմնական դերի, ինչպիսին է, օրինակ, ՀԿ-ի, կառավարության կամ բիզնեսի ներկայացուցիչ լինելը: Նրանք կարող են նաև դասակարգվել ըստ քննարկվող խնդրի վերաբերյալ իրենց հետաքրքրությունների և նպատակների (արդյոք նրանք կողմ են, թե՞ դեմ, արդյոք տնտեսական շահույթը առավելագույնին հասցնելու շահ ունե՞ն, թե՞ առաջնորդվում են շրջակա միջավայրի վերաբերյալ իրենց ունեցած մտահոգություններով): Շատ հաճախ նրանք դասակարգվում են ըստ խնդրի վրա իրենց ազդեցությունն ունենալու կարողության:

Գրիդների և մատրիքսների միջոցով կարելի է նրանց խմբավորել ըստ որոշ չափորոշիչների, որոնք կարող եք տեսնել սլայդում: Նմանատիպ մատրիքսներ օգտագործելու միջոցով հնարավոր է ավելի լավ սահմանել շահագրգիռ կողմերին հասնելու համար հաղորդակցության և ներգրավածության ռազմավարությունները: Օրինակ՝ եթե մի խումբն ազդեցիկ է և նպաստում է Ձեզ մտահոգող խնդրի լուծմանը, կարող եք նրանց ակտիվորեն ներգրավել գործընթացի մեջ և զարգացնել նրանց առաջնորդման կարողությունները: Բայց, եթե հակառակն է՝ խումբը շատ ազդեցիկ է, բայց դեմ է խնդրին, անհրաժեշտ կլինի ավելի շատ ջանք գործադրել նրանց հետ երկխոսության մեջ մտնելու և համաձայնության հասնելու ռազմավարություններ մշակելու համար:

3. Կոնկրետ հարցի համատեքստում շահագրգիռ կողմերի՝ խմբերի և անհատների միջև եղած հարաբերությունների ուսումնասիրության մեթոդները: Կան մի քանի մեթոդներ: Ամենահաճախ կիրառվող մեթոդներից է Սոցիալական ցանցերի վերլուծությունը: Այն տրամադրում է տեղեկություն ազդեցության ձևերի, հաղորդակցության, և սոցիալական ցանցերում դերակատարների փոխադարձ վստահության վերաբերյալ՝ պարզելով, թե որ դերակատարներն ունեն կենտրոնական, չեզոք կամ մարգինալացված դիրք:

Այս երեք քայլերը կարելի է իրականացնել մասնակցային եղանակով՝ թույլ տալով տեղական համայնքները ներկայացնող մասնակցներին լինել ցանցերի փորձագետներ և խթանելով միմյանց հետ քննարկումներն ու միմյանից սովորելու գործընթացը:

Այն դեպքում, երբ առկա են զգալի փաստագրված ապացույցներ կամ եթե վերլուծաբանները բավականին տեղեկացված են խնդրին առնչվող անհատների կամ խմբերի մասին, շահագրգիռ կողմերի վերլուծությունը հնարավոր է իրականացնել առանց շահագրգիռ կողմերի ակտիվ մասնակցության: Այնուամենայնիվ, ակտիվ

stakeholders. For example, stakeholders can be categorised based on their main role, such as being part of an NGO, the government or the business sector. They can also be categorised based on their interests and goals regarding the issue at stake (are they for or against, do they have any financial profit interest or are they driven by environmental concerns). Very often they are categorised based on their power to influence the issue. With the help of grids and matrices they can be grouped using the criteria that interest us. The example shown on the slide uses power and goals as the classifying criteria. By using this type of matrix, it is possible to better define communication or engagement strategies to approach stakeholders. For example, if one group is very influential and is supportive of the issue, you might want to actively engage them in the process and enhance their leadership capacity. On the contrary, if they are very influential, but are against the issue, you might need to put more effort in creating dialogue and consensus strategies.

3. There are several methods to investigate the relationships that exist between stakeholders (individuals and groups). One of the most commonly used ones is Social Network Analysis. This method of analysis characterizes networked structures in terms of nodes (individual actors, people, or things within the network) and the ties, edges, or links (relationships or interactions) that connect them. It provides insights into patterns of influence, communication, and trust between actors in social networks, and identifies which actors are in positions of centrality, neutrality or marginality.

All three steps can be carried out in a participatory way, by letting participants from the local community be the “network-experts” and facilitate a process of discussion and learning.

Sometimes there may be enough documented cases of stakeholders and their relationships that experts can conduct their identification and mapping without directly engaging local communities. Input from stakeholders can be obtained if there is missing or unclear information.

մասնակցությունը հնարավոր է անհրաժեշտ լինի, եթե պարզ չէ, թե որ հարցն է առավել համապատասխան ուսումնասիրության համար կամ եթե անբավարար տեղեկատվություն կա այն բնակչության վերաբերյալ, որտեղից պետք է ներգրավել շահագրգիռ կողմին:

Մեթոդը, որն այժմ կներկայացվի, բարձր մակարդակի մասնակցության մոտեցման օրինակ է: Այն ներկայացնում է վերը նշված երեք քայլերը հարցազրույցների և աշխատաժողովների համատեքստում:

Սլայդ 11

Net Map-ը մեթոդ է, որը մշակվել է շրջակա միջավայրի կառավարման հարցերով զբաղվող մի խումբ խորհրդատուների կողմից: Այս մեթոդը համախմբում է շահագրգիռ կողմերի վերլուծության բոլոր քայլերը. շահագրգիռ կողմերի, իրենց հարաբերությունների, նպատակների և ազդեցության բացահայտումը: Այս մեթոդը կարող է կիրառվել հետազոտողների, ֆասիլիտատորների և իրագործողների կողմից: Net-Mapը չի իրականացվում մի խումբ փորձագետների կամ հետազոտողների կողմից մի սենյակում: Այն ավելի շատ նման է շահագրգիռ կողմերի խմբի հետ հարցազրույցի, որտեղ փորձագետը կամ հետազոտողը հարցազրույցի ֆասիլիտատորն է:

Ինչպե՞ս է այն իրականացվում: Կա ֆասիլիտատոր և մասնակից կամ մասնակիցների խումբ, որոնք նախ կազմում են քննարկվող խնդրի հետ կապված բոլոր համապատասխան դերակատարների ցանկը: Այնուհետև նրանք քարտերի վրա գրում են դերակատարների անունները և դրանք փակցնում են թղթի վրա՝ վերջիններիս հարաբերությունների քարտեզագրումը սկսելու համար: Քարտեզագրված դերակատարների դասակարգեր ավելացնելու համար կարելի է օգտագործել գույներ կամ սիմվոլներ: Նրանց հարաբերությունները նշվում են մեկ կամ երկպիսանի սլաքներով՝ կախված այն գնում է մեկ, թե մի քանի ուղղությամբ: Սովորաբար միայն մի քանի հարաբերություններ են քարտեզագրվում: Մասնակիցներին խնդրում են նաև կառուցել աշտարակներ՝ ցույց տալու յուրաքանչյուր դերակատարի ազդեցությունը: Որքան բարձր է աշտարակը, այնքան մեծ է ազդեցությունը: Քննարկվող խնդրի վերաբերյալ մասնակիցների նպատակները և հետաքրքրությունները նույնպես նշվում են քարտեզի վրա:

Գործընթացի համար ոչ հատուկ տեխնոլոգիաներ են անհրաժեշտ, ոչ էլ մեծ ծախսեր: Պարզապես անհրաժեշտ են մեծ թղթեր, կպչուն թղթեր, գրիչներ, քարեր կամ այլ առարկաներ՝ ազդեցության աշտարակները կառուցելու համար:

Ինչպես մասնակցային քարտեզագրման այլ մոտեցումները, Net Map գործիքը նույնպես նախատեսված է հետազոտողների տվյալների հավաքագրումը և մասնակիցների ուսումնառությունը համատեղելու համար:

The method that will now be presented is an example of a participatory approach. It covers the 3 steps just discussed in the context of interviews and workshops.

Slide 11

The Net-Map is a method developed by a team of consultants working on environmental governance issues. This method combines all stakeholder analysis steps: identifying stakeholders, their relations, goals and influence. It can be used by researchers, facilitators, and implementers. Net Map is similar to holding an interview with a group of stakeholders where the expert or researcher is the facilitator.

This is how it works: The facilitator and a participant or group of participants first define a list of all the relevant actors that come to mind. Then they write the names of the actors on cards and pin them onto a paper or board to start mapping their relationships. Colors and symbols can be used to add categories to the actors mapped. The relationships are mapped with arrows (single or double headed depending on whether it goes in one or two directions). Typically only a couple of relationships are mapped (which include the how part of the question, e.g. finance flow, knowledge flow, restrictions, collaboration, resources...). Participants are also asked to build towers to symbolise the level of influence of every actor: the higher the tower the more the influence. Finally, the goals and interests of the participants are indicated on the map.

The method is low-tech and low cost; it only requires big sheets of paper, post-its, pens and some stones or pieces to build towers of influence.

Similar to other participatory mapping approaches, the Net-Map tool is designed to combine researcher data collection with participant learning. It is not only about the outcome, but also about the process.

Կարևոր է ոչ միայն վերջնարդյունքը, այլև գործընթացը:

Սլայդ 12

Այժմ ավելի մանրամասն կանդրադառնանք Net Map-ի բոլոր քայլերին, որոնք հետագայում կարող եք կիրառել:

Այդ նպատակով կներկայացնենք մի օրինակ, թե ինչպես է այս մոտեցումը կիրառվել Գանայում ջրբաժանի աշխատանքների կառավարման ժամանակ:

Այս ուսումնասիրությունը հրատարակվել է 2010 թվականին՝ Շիֆերի և Հաքի (Schiffer and Hauck) կողմից:

Սլայդ 13

Քայլ առաջին՝

Սահմանել նախագծի ու քննարկվող խնդրի հստակ նպատակը և ընդհանուր մոտեցումը:

Դրա համար պետք է պատասխանել հետևյալ հարցերին.

- Ո՞րն է խնդիրը:
- Որքա՞ն ժամանակահատվածում և ո՞ր տարածքներում պետք է իրականացնել նախագիծը:
- Դերակատարների ինչպիսի՞ դասակարգումը կարող է օգտակար լինել նախագծի համատեքստում:
- Նրանց միջև առկա ի՞նչ տեսակի կապեր պետք է ուսումնասիրել:

Net Map գործիքը չի կարող օգտագործվել շատ ընդգրկուն հարց քննարկելու համար: Որպեսզի այն արդյունավետ լինի, այն պետք է որոշակի լինի և հստակ պատկերացում ունենա խնդրի ու այն լուծելու վերաբերյալ:

Գանայի օրինակում, Net Map մեթոդը կիրառվել է Սպիտակ Վոլտայի ավազանի խորհրդի նախաձեռնությամբ: Վերջինս բազում շահագրգիռ կողմեր ունեցող տեղական կազմակերպություն է Հյուսիսային Գանայում: Հետազոտությունն իրականացվել է 2006-ից 2008 թվականների ընթացքում:

Խորհուրդը համախմբում է ջրային ոլորտի պետական գործակալությունների, հասարակական կազմակերպությունների և իշխանությունների ներկայացուցիչներին՝ խորհրդատվական խումբ ստեղծելու նպատակով: Խորհրդի նպատակն է բարելավել բոլոր շահագրգիռ կողմերի համակարգումը՝ ուղղված Սպիտակ Վոլտա գետի ավազանում տնտեսական և էկոլոգիական տեսանկյունից ջրի կայուն օգտագործմանը: Այնուամենայնիվ, խորհուրդն ունի սահմանափակ պաշտոնական կատարողական կարողություններ:

Այսպիսով, այս դեպքում նրանց հստակ նպատակն է հասկանալ ցանցի տարբեր դերակատարների ազդեցությունը և նպատակները՝ խորհրդի անդամակցության շրջանակում և այդ շրջանակից դուրս, և

Slide 12

We will now explore all the steps of the Net-Map process in detail, which will show how to put them into practice. We will discuss 4 steps.

To illustrate these steps, we will review an example of how these steps were followed for implementing a participatory management of a watershed in Ghana.

This case study was prepared by Schiffer and Hauck in 2010. Below we have frequently quoted from this published case study.

Slide 13

Step 1.

Have a clear project and problem aim and define the general approach.

To define the aim and the approach answer these questions:

- What is the issue?
- What are its temporal and spatial scales?
- What type of actor categorization can help in this project?
- What type of links between the actors do we need to investigate?

Net-map cannot be used to approach a very broad question. For the method to be effective, the question needs to be specific and the issue and approach need to be clear.

“In the example of Ghana, the Net-Map method was applied under the initiative of the White Volta Basin Board (WVBB), a local multi-stakeholder organization in northern Ghana. The research was conducted between 2006 and 2008.

WVBB brings together representatives from different water related public-sector agencies, nongovernmental organizations (NGOs), and traditional authorities to form a consultative group. The aim of the board is to improve the coordination of all stakeholders toward an economic and environmentally sustainable use of water in the White Volta River Basin. However, the board has limited formal enforcement capacity.”

Their specific aim was to understand “the influence and goals of different actors in the network (within and beyond the board membership) and use this knowledge

նազմավարական կերպով օգտագործել այդ գիտելիքը՝ խթանելու խորհրդի անդամների կողմից մշակված առաջարկների իրականացումը, ինչն էլ իր հերթին կնպաստի ջրի կայուն կառավարմանը:

Քայլ երկրորդ՝ սահմանել հստակ հարց, որը կառաջնորդի ամբողջ գործընթացը: Այս հարցը պետք է ներառի տեղեկատվություն ժամանակահատվածի և տարածքների, ինչպես նաև խնդրի մասին:

Այս օրինակում հարցը հետևյալն է՝ «Ո՞վ և ինչպե՞ս կարող է ազդեցություն ունենալ ավազանի խորհրդի՝ իր առջև դրված նպատակներին հասնելու քայլերի վրա»: Այս հարցը մշակվել է հարցազրույցների նախապատրաստական շրջանից հետո, որի ընթացքում խորհրդի 17 անդամներին խնդրել էին սահմանել խորհրդի նպատակները: Նպատակները բաժանվել էին շրջակա միջավայրի, տնտեսական և պետական կառավարման խմբերի: Քանի որ խորհրդի անդամները բնապահպանական և տնտեսական նպատակները որոշ չափով հակասական էին համարում, որոշվեց քարտեզագրումը կենտրոնացնել այս երկու նպատակների վրա: Սա արվեց, որպեսզի մեծացվի խորհրդի անդամների՝ ռազմավարական սկզբունքով գործելու կարողությունները՝ նպատակներին հասնելու և դրանք միավորելու համար կոալիցիաներ կազմելու հարցում:

Դերակատարների միջև առկա հարաբերությունների տեսակները նույնպես պետք է հստակ սահմանվեն՝ ելնելով նախագծի նպատակներից: Այս դեպքում, նպատակներն էին ղեկավարումը, ֆինանսների հոսքը, խորհրդատվությունը և տեղեկատվության հոսքը:

Քայլ երրորդ՝ քարտեզագրում՝ բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

Մասնակիցները հավաքվել էին մեծ դատարկ թղթի շուրջ և նրանց ասվել էր մտածել բոլոր անհատների, խմբերի կամ կազմակերպությունների մասին, որոնք կարող էին իրենց ազդեցությունն ունենալ, ջրավազանի խորհրդի՝ իր առջև դրված նպատակների իրագործման վրա: Նշվել էր, որ դերակատարները պետք է լինեն տեղական, ինչպես նաև տարածաշրջանային, ազգային և միջազգային շրջանակներից և պարտադիր չէ, որ պաշտոնապես կապված լինեն գործընթացին:

Այս փուլը կարող է իրականացվել տարբեր ձևերով.

- որոշ դեպքերում մասնակիցները կարող են ունենալ դերակատարների երկար ցանկ, որոնց անունները նրանք անմիջապես նշում են և արագ կերպով լրացնում են քարտեզը,
- այլ դեպքերում մասնակիցները կարող են դանդաղ գործել և հարցազրույցի կամ աշխատաժողովի որոշ ընթացքում ավելի ու ավելի դերակատարների անուններ հիշել և նշել:

strategically to push recommendations, developed by the board, to increase sustainable water governance.”

Step 2: define a very clear “Net-map question” that will drive all the processes. This question should include information about the temporal and spatial scale and the issue.

In the example, the question is —“Who can influence whether and how the basin board achieves its goals?”. “This question was developed following a preparatory round of interviews during which all 17 board members were asked to define goals for the board. The goals were divided into environmental, economic, and governance topics. Because board members saw the environmental and economic goals as partly antagonistic, the focus was placed on mapping these two goals to increase the board’s ability to act strategically in forming coalitions to achieve and consolidate these goals”.

The links between the actors investigated also need to be clearly defined based on the objectives of the project. In this case, these were: line of command, flow of funds, giving advice, and flow of information.

Step 3: mapping exercise with all the stakeholders.

Participants were assembled around a large empty sheet of paper and were asked to think of all the individuals, groups, or organizations who could influence whether and how the basin board achieved its goals? It was stressed that actors can be from local and regional, national, and international levels, and not necessarily formally linked to the process.

This phase can take different shapes: in some cases participants can have a long list of actors whom they name immediately and fill the map quickly. In other cases, participants can start slowly and add more and more actors throughout the whole process of the workshop or interview.

Այս քայլի ժամանակ, դերակատարների անունները գրվում են քարտերի վրա, որոնք կարող են լինել կաշուն թղթեր կամ թղթի կտորներ: Դրանք ամրացվում են կաշուն ժապավենի օգնությամբ և բաշխվում դատարկ քարտեզով մեկ: Տեսողական ավելի հստակ կառուցվածք ունենալու համար կարելի է դերակատարների տարբեր խմբերի համար օգտագործել տարբեր գույների քարտեր:

Դերակատարների միջև առկա կապերը պատկերված էին քարտերի միջև նկարված տարբեր գույնի սլաքների միջոցով: Մասնակիցներին խրախուսում էին ցանկացած պահի ավելացնել դերակատարների անունները և նրանց կապերը: Սա թույլ էր տալիս տարբեր մոտեցումներ ունեցող մասնակիցներին արտահայտվել իրենց տեմպերով:

Ազդեցությունը քարտեզագրելու համար հարցը հետևյալն էր՝ «Որքա՞ն մեծ ազդեցություն կարող են ունենալ այս դերակատարները ավազանի խորհրդի նպատակներին հասնելու հարցում»: Ազդեցության աշտարակներ կառուցելու կանոնները հետևյալն էին՝ որքան մեծ ազդեցություն ունի դերակատարը, այնքան ավելի բարձր է աշտարակը: Աշտարակները կարող են այնքան բարձր լինել, որքան ցանկանում են հարցազրույցի մասնակիցները: Երկու դերակատարներ կարող են ունենալ նույն բարձրության աշտարակներ: Եթե դերակատարը ոչ մի ազդեցություն չունի, ապա ոչ մի աշտարակ չի ավելացվում:

Եվ վերջում մասնակիցներին հարցրել էին, թե արդյո՞ք դերակատարներն ունեն՝

- զարգացման նպատակներ,
- բնապահպանական նպատակներ,
- թե՞ երկուսն էլ:

Այս նշումներն արվում էին դերակատարների անունների կողքին: Պաշտպանության համար նշվում էր P տառը՝ protection, զարգացման համար՝ D տառը՝ development, և PD տառերը՝ երկուսի համար:

PD նշվում էր երկու նպատակների համար, բայց ավելի շատ ուղղված պաշտպանությանը, DP-ն երկու նպատակների համար, բայց ավելի շատ ուղղված զարգացմանը:

Ընթացքում գրի էին առնվում դերակատարների, իրենց միջև եղած հարաբերությունների և ազդեցության վերաբերյալ բացատրությունները ու քննարկումները: Սա նույնքան կարևոր է, որքան վերջնական քարտեզը, քանի որ դրանք թեմայի վերաբերյալ հետաքրքիր փաստեր են ներկայացնում:

Սլայդ 14

Քայլ չորրորդ՝ վերջնական քարտեզի պատկերում և քննարկում:

Երբ քարտեզագրումն ավարտվում է, հարցազրույցի

In this step, the names of the actors are written on the actor cards (post-its or small pieces of paper fixed with masking tape) and distributed on the empty map. To allow for a better defined visual structure, different color actor cards can be used for different actor groups (e.g., governmental, NGO, civil society, and private sector).

The different linkages between actors were drawn using different colored arrows. Adding actors and links whenever they came to mind was encouraged, to allow people with different approaches to express themselves at their own pace.

For mapping influence, the question was “How strongly can these actors influence the achievements of the basin board’s goals?” The rules for building the influence towers were: the more influence an actor has, the higher the tower. The towers can be as high as the interviewees want. Two actors can have towers of the same size. If an actor has no influence at all, no tower is added.

Finally, the participants were asked whether actors had developmental or environmental goals or both. These orientations were noted next to the names of the actors: P for protection; D for development; PD for both goals but with stronger protection focus; and DP for both goals but with stronger development focus.

During the process, the explanations and the discussions around the mapping of the actors and their relationships and influences were recorded. These are as important as the resulting map itself as they provide interesting insights into the topic.

Slide 14

Step 4. Visualization and discussion of the resulting map.

մասնակիցներին հաճախ խնդրում են ընդհանուր համակարգի վերաբերյալ իրենց կարծիքը հայտնել, մեկնաբանել կապերը և քննարկել, թե որտեղ բարելավման կարիք կա: Քարտեզի պատկերումը կարող է հեշտացնել մասնակիցների միջև տեղեկատվության փոխանակումը և օգնել սոցիալական ուսումնասության գործընթացին: Մինչ մասնակիցները քննարկում և պատրաստում են ընդհանուր քարտեզը, շահագրգիռ կողմերը և գիտնականները հնարավորություն են ունենում հասկանալ խնդիրը տարբեր կողմերից և պատկերացում են կազմում դերակատարների միջև առկա ֆորմալ և ոչ ֆորմալ կապերի մասին: Քարտեզն օգտագործվում է դերակատարների ազդեցության, դիրքի և դերի մասին բաց քննարկումներ կազմակերպելու նպատակով:

Ազդեցության մակարդակի կամ աշտարակի բարձրության միջոցով հնարավոր է հասկանալ, թե ինչպես են կարևորությունն ու ազդեցությունը կապված միմյանց հետ, և թե ովքեր են ազդեցիկ գործընկերներն ու հակառակորդները: Երբ մասնակիցները գոհ են ստացված արդյունքից, քարտեզի վրա դերակատարների անվան կողքին նշվում է ազդեցության աշտարակի բարձրությունը: Սա կարևոր է հետագայում տվյալները հեշտությամբ մուտքագրելու համար:

Դերակատարների նպատակների վերլուծությունը կարող է օգնել ավելի լավ գաղափար կազմել ցանցի դինամիկայի մասին. արդյո՞ք ցանցի ազդեցիկ անդամներն ունեն նույն նպատակները: Արդյո՞ք ցանցի անդամներն օգտագործում են իրենց կապերը այլոց վրա ազդեցություն գործելու համար, որ նրանք էլ հետևեն իրենց նպատակներին: Արդյո՞ք այլոց նպատակները հարցազրույց վերցնող գործընկերների համար պարզ են, թե՛ ոչ այնքան:

Քարտեզագրումն օգնեց մասնակիցներին համակարգել իրենց մտքերը և ծառայեց որպես գործիք՝ ցանցի վերաբերյալ իրենց խորը, բայց չարտահայտված գիտելիքները կարևորելու համար: Սա, իր հերթին, օգնեց կենտրոնանալ ռազմավարական պլանավորման համար առանցքային դերակատարների վրա, քանի որ նրանք կա՛մ նույն նպատակներն ունեն, կա՛մ էլ մեծ ազդեցություն ունեն:

Մասնակիցներն իրարից շատ բան սովորեցին, մասնավորապես, երբ բացատրում էին միմյանց, թե ինչու այս կամ այն դերակատարը պետք է կամ չպետք է լինի քարտեզի վրա, ինչպես են նրանք կապված միմյանց հետ, և ինչու որոշ դերակատարներ ընկալվում էին որպես ազդեցիկ կամ ոչ ազդեցիկ: Իրենց փորձով կիսվելը օգնեց խորհրդի անդամներին ձևավորել ընդհանուր ըմբռնում, իսկ միահամուռ ուժերով քարտեզագրման ընթացքում պարզեցված բանակցություններն օգնեցին ունենալ մեկ ընդհանուր տեսլական: Մասնակիցները հարցրեցին՝ «Ինչ պետք է անենք, որ այս գործընթացում ավելի մեծ ազդեցություն ունենանք»:

Once the network map has been drawn, interviewees are often asked to comment on the system as a whole, give their interpretation of the network and discuss where there is room for improvement. Visualizing the network can facilitate participant exchanges and support social learning processes. As participants discuss and develop a shared map, stakeholders and scientists alike come to understand diverse perspectives on the issue and gain insights into the workings of formal and informal links between the various actors involved in the issue. The network map is used to facilitate an explicit discussion about influence, positions and the associated actor roles.

The influence value (height of tower) can be used to understand how centrality and influence are related, and to identify influential partners or antagonists. Once the interviewee is content with the whole setup, heights of the influence towers are noted next to the actors' names on the network map. This is important for easy data entry later.

Analyzing the goals of actors can help develop a richer understanding of the network dynamics. Are certain goals shared by the influential network members? Do network members use their links (e.g., out-degree centrality in the funding or the advice network) to influence others to follow their own goals? Are the goals of others clear or opaque to the interview partners?

Drawing maps help participants structure their own thoughts and serves as a tool to prioritize extensive but implicit network knowledge. This, in turn, helps focus on actors of core importance for strategic planning, either because they have the same goals or high influence.

Learning takes place while explaining to each other why an actor should be on the map, how they are connected, and why certain actors are perceived influential. In this case, sharing experiences helped board members develop a common understanding and to facilitate negotiations, while the process of drawing a map together helped to formulate a common vision. When presenting the common map to a bigger audience, this elicited an engaged discussion about the possible involvement of and collaboration with actors on the map and others who were not mentioned. Participants asked, “What do we need to do, to become more influential in this process?”

Հետևյալ հարցերը կարող են օգնել ուղղորդել խմբին հեռանկարներն ուսումնասիրելիս և դրանցով փոխանակվելիս՝

- Ցանցի ո՞ր կապերը պետք է ամրապնդվեն պետական կառավարման մարտահրավերները հաղթահարելու համար:
- Ինչպե՞ս կարող են մարզինալացված շահագրգիռ կողմերը հզորանալ կամ կապ հաստատել ցանցի այլ դերակատարների հետ:
- Արդյո՞ք կան դերակատարներ, ովքեր հնարավորություն ունեն ծառայելու որպես գիտության աղբյուր կամ որպես միջնորդ՝ կոնֆլիկտների ժամանակ:
- Ցանցի ո՞ր դերակատարները հնարավոր է հակառակվեն կոնկրետ նպատակներին կամ կոնֆլիկտ առաջացնեն:

Սլայդ 15

Կիրառե՛ք Net Map գործիքը ձեր գործընկերների, ընկերների կամ ընտանիքի հետ:

Սլայդ 16

Իմացե՛ք ավելին Սոցիալական ցանցերի վերլուծության մասին: Ուսումնասիրե՛ք այս աղբյուրները:

Սլայդ 17

Մոդուլի այս բաժնում կբացահայտենք, թե ինչ մոտեցումներ է պետք կիրառել հասկանալու համար, թե ինչպես են մարդիկ գնահատում բնությունը և իրենց շրջակա միջավայրը:

Սլայդ 18

Այս բաժնում կքննարկենք հետևյալը՝

1. Արժեքների վերհանման կարևորությունը,
2. Ազատ թվարկման կամ Freelisting-ի ներկայացում,
3. Ազատ թվարկում կամ Freelisting. ինչպե՞ս իրականացնել,
4. Ազատ թվարկում կամ Freelisting. օրինակ
5. Գործնական կիրառություն
6. Առաջադրանք

Սլայդ 19

Թե ինչպես են մարդիկ ընկալում շրջակա միջավայրը և ինչպես են գնահատում դրանից ստացված օգուտները՝ տարբեր ոլորտների ուսումնասիրության թեման է եղել:

«Գնահատումը, ավելի լայն իմաստով, «կարևորություն տալը», բնական ռեսուրսների և հողօգտագործման վերաբերյալ որոշումների անբաժանելի մասն է կազմում: Էկոհամակարգերի վերաբերյալ մարդկանց որոշումները և դրանց հանդեպ վերաբերմունքը որոշվում են մի շարք ձևերով, որտեղ բնությունը, էկոհամակարգային ծառայությունները և սոցիալական խմբերը կարևոր են անհատների և սոցիալական խմբերի համար: Կարևորությունը, որը մարդիկ տալիս են էկոհամակարգերին և էկոհամակարգային

The following questions can help guide a group's exploration and exchange of perspectives:

- Which network links should be strengthened to address the governance challenge?
- How can marginalized stakeholders be empowered or link up with other actors in the networks?
- Are there actors in a position to serve as knowledge hubs or mediate the conflict?
- Which network actors could work against specific goals or cause conflict?

Slide 15

Practice Net Map with your colleagues, friends or family! Consider completing these activities.

Slide 16

Find out more about Social Network Analysis; explore these sources.

Slide 17

In this section we will gain insights into approaches for eliciting how people value nature and their local environment.

Slide 18

In this section will cover:

1. Importance of eliciting values
2. Introduction to Freelisting
3. How to conduct Freelisting
4. An example of Freelisting
5. Discussion of the practice

Slide 19

The way we perceive our local environment and value its different benefits is a subject of different fields.

“Valuation, in its broad sense of ‘assigning importance’, is inherently part of most decisions on natural resource and land use. Decisions and behaviors toward ecosystems are determined by the multiple ways in which nature, ecosystems, or ecosystem services are important for individuals or social groups. The importance that people place on ecosystems and ecosystem services has been identified as a crucial dimension of sustainable management of social-ecological systems.”

ծառայություններին, համարվում է սոցիալ-էկոլոգիական համակարգերի կայուն կառավարման կարևոր առանձնահատկություն»:

Տարբեր մարդիկ և սոցիալական խմբեր կարող են էկոհամակարգերը և լանդշաֆտները տարբեր կերպ գնահատել, որն էլ, որոշ դեպքերում, կարող է հակասական լինել:

Էկոհամակարգերին վերագրվող համընդհանուր արժեքը հասկանալն օգնում է՝

- Կառավարումը համաձայնեցնել մարդկանց արժեքների հետ:
- Բացահայտել կառավարման մոտեցումների հետ կապված համաձայնեցված և հակասող արժեքները:

Այդ իսկ պատճառով, նման արժեքների վերհանումը նաև կարևոր է տարածքների պլանավորմամբ զբաղվող անձանց համար, որպեսզի կառավարման որոշումները համաձայնեցվեն համայնքի ցանկությունների և կարիքների հետ:

Կայունության ոլորտի գիտնականների համար կարևոր է հասկանալ, թե մարդիկ ինչ համընդհանուր արժեքներ են վերագրում բնությանը, որպեսզի կարողանան խթանել ավելի կայուն վարքագծեր: Իսկ տնտեսագետները փորձում են գնահատել այդ արժեքները և գին որոշել դրանց համար, որպեսզի ծախսի և օգուտների գնահատման ժամանակ կարողանան դրանք հաշվի առնել:

Այնուամենայնիվ, այս արժեքները և ըմբռնումները բացահայտելը հեշտ չէ: Բազում մոտեցումներ և մեթոդներ են մշակվել դրանց մասին գաղափար կազմելու համար, օրինակ՝ մշակութային էկոհամակարգային ծառայություններ, բնության բարիքները մարդկանց համար, հարաբերությունների արժեքները և այլն: Բայց այս բոլոր մոտեցումներն ունեն մեկ ընդհանրություն՝ գիտակցելը, որ այդ արժեքների վերհանման համար անհրաժեշտ է կիրառել մասնակցային մոտեցումներ, որտեղ տեղեկատվություն են տրամադրում այն մարդիկ, ում արժեքները պետք է վերլուծվեն:

Էկոհամակարգային ծառայությունների արժեքների գնահատման համար մասնակցային հետազոտական մեթոդները, ինչպես ընդունված է մարդկանց կողմից, լայն կիրառություն է ունեցել գիտության տարբեր ճյուղերում՝ սկսած ազգագրությունից և սոցիոլոգիայից մինչև քաղաքական էկոլոգիայի, աշխարհագրության կամ տնտեսագիտության այլընտրանքային մոտեցումների մեջ՝ ինչպիսիք են էկոլոգիական կամ ֆեմինիստական տնտեսագիտությունը:

Որպես գիտության ճյուղերի բազմազանության հետևանք, այս մեթոդները շատ են տարբերվում միմյանցից այն առումներով, թե ինչ գործընթացներ կամ միջոցներ են կիրառում, և թե ինչպես են արտահայտում

Different people and social groups might value ecosystems and landscapes in very different ways, which in some cases might conflict.

Understanding the plural values people attribute to ecosystems aids in:

- aligning management interventions with people's values,
- identifying consensual and conflicting values associated with management approaches.

Therefore, eliciting values is also important for land planners to better adapt the management decisions to the wishes and needs of the community.

For sustainability scientists, understanding the plural values people attach to nature is relevant for triggering sustainable behaviors. Economists try to assess values and give them a price so they can be better taken into account when cost and benefits are evaluated.

These values and perceptions however, are not easy to capture. Myriad approaches and methods have been developed to conceptualize them (e.g. cultural ecosystem services, nature contributions, relational values, etc). What all these approaches share is the understanding that to elicit these values it is necessary to use participatory approaches where the people whose values are analyzed provide the information.

Participatory research methods for the assessment of the valuation of Ecosystem Services as perceived by people have been applied widely in various scientific disciplines, ranging from ethnography and sociology to political ecology, geography or alternative approaches to economics such as ecological or feminist economics.

As a consequence of this diversity of disciplines, these methods vary greatly in terms of which processes and measures they elicit and how they express the values of ecosystem services.

էկոհամակարգային ծառայությունների արժեքները:

Մեթոդը, որ մենք կքննարկենք կոչվում է **Freelisting** կամ **ազատ թվարկում**:

Սլայդ 20

Ազատ թվարկումը կամ freelisting-ը մասնակցային հետազոտության պարզ մեթոդ է, որն իրականացվում է համակարգված հարցազրույցի շրջանակներում:

Ազատ թվարկման հարցազրույցները հատկապես տարածված են ազգագրական մշակութային ոլորտի վերլուծությունների մեջ: Մեթոդը կիրառվում է, հասկանալու համար, թե ինչպես են տարբեր մշակութային պատկանելություն ունեցող մարդիկ մեկնաբանում ֆիզիկական կամ գաղափարային առանձնահատկությունները: Մշակութային տիրույթը կարելի է սահմանել, որպես բառերի, գաղափարների կամ նախադասությունների համակարգված ամբողջություն, որոնք բոլորը միասին վերաբերում են մեկ հայեցակարգային ոլորտի, օրինակ՝ սնունդ, լանդշաֆտ կամ բարեկեցություն:

Նմանատիպ մշակութային տիրույթների վերլուծությունն իրականացվում է հետևյալ կերպ. մարդկանց խնդրում են թվարկել թեմայի հետ կապված այն ամենը, ինչ անցնում է իրենց մտքով: Ազատ թվարկման հարցազրույցի ժամանակ մասնակցինները ցանկացած հերթականությամբ պարզապես թվարկում են այն ամենը, ինչն իրենց կարծիքով այդ ոլորտի մաս է կազմում (օրինակ՝ իրենց սիրելի մթերքները, դեղաբույսերը, շրջակա միջավայրը պահպանելու պատճառները):

Այս մոտեցումը կիրառվում է հասկանալու համար, թե որոշակի հասարակությունում մարդիկ ինչպես են մտածում իրենց աշխարհի մասին և ինչպես են այն սահմանում: Այս մեթոդով շեշտը դրվում է մարդկանց սուբյեկտիվ, տվյալ համատեքստին բնորոշ ընկալումների և իրենց սպասելիքների վրա: Քանի որ բոլոր մշակույթները օգտագործում են որոշակի դասակարգման համակարգ, հետազոտողը փորձում է հասկանալ, թե որ դասակարգերն են կարևոր մարդկանց համար, ինչպես են դրանք դասավորված և ինչ արժեքներ են դրանց վերագրվում: Ազատ թվարկումների վերլուծությունը կարող է նաև օգտագործվել համեմատելու համար մասնակիցների տարբեր ընկալումներն առ այն, թե որ առարկաները կամ երևույթներն են կարևոր, որ առարկաներն են պատկանում ոլորտին, ինչպես նաև տարանջատել հնարավոր փորձագետներին և պարզապես ոլորտից տեղեկացված անձանց:

Սլայդ 21

Freelisting-ը հիմնված է երեք ենթադրությունների վրա:

Նախ ազատ թվարկում իրականացնելիս մարդիկ հակված են առաջինը թվարկել այն տերմինները, որոնց ավելի լավ

The method we will be looking at in this module is called “freelisting.”

Slide 20

Freelisting is a simple participatory research method used within the context of a structured interview.

Freelisting interviews “are common in ethnographic cultural domain analysis. They are applied to investigate the various ways in which people with different cultural backgrounds interpret physical or conceptual features”. A cultural domain can be defined as “an organized set of words, concepts, or sentences that jointly refer to a single conceptual sphere” for instance food, landscapes or wellbeing.

Such cultural domains are analyzed by having people list all the items they can think of in regard to a specific topic. In a freelist interview, a respondent simply lists things that they perceive to be part of a domain (e.g., favorite foods, medicinal plants, reasons to protect the environment) in whichever order it comes to mind. If you have written down the fruits you know then you have just completed a freelist.

This approach is used to understand how people in a society think about and define their world. In this method emphasis is placed on the self-reported subjective context-specific perceptions and expectations. Since all cultures use some system of categories to order experience, the researcher tries to determine what categories are important to people, how they are arranged, and what values are attached. Freelists can also be analysed to compare informants' perceptions of what items are important, determine a consensus of what items belong to the domain, and critically, identify potential experts or knowledgeable amateurs.

Slide 21

Freelisting rests on three assumptions.

First, when people freelist, they tend to list terms in order of familiarity. When listing kinship terms, for

են ծանոթ: Օրինակ, ազգակցական կապի տերմինները թվարկելիս մարդիկ սովորաբար նշում են «մայրիկ» տերմինը «հորաքույր» տերմինից առաջ, և «հորաքույր»-ը՝ «ծնողների հորաքրոջից» առաջ:

Երկրորդը՝ թեմայից լավ տեղեկացված մարդիկ ավելի շատ տերմիններ են թվարկում, քան նրանք, ովքեր այնքան էլ ծանոթ չեն թեմային:

Եվ երրորդը, այն առարկաները կամ երևույթները, որոնք մարդիկ ամենաշատն են նշում, սովյալ տարածքում առավել հայտնի են: Իսպանացիները հավանաբար ավելի հաճախ կնշեն «լոլիկ և նարինջ», քան «կոկոս» կամ «մանգո»:

Սլայդ 22

Ինչպես ավելի վաղ նշվել էր, Freelist-ը պարզ մեթոդ է: Այն իրականացվում է համակարգված հարցազրույցի ձևով, որի ընթացքում մասնակիցը կոնկրետ թեմայի հետ կապված որոշակի առարկաների կամ երևույթների ցանկ է տրամադրում:

Օրինակ՝ Կլաուդիա Բիլինգի ղեկավարած ուսումնասիրության համար, որի նպատակն էր գնահատել, թե ինչպես են կոնկրետ տարածքի կենսաֆիզիկական առանձնահատկություններն ազդում տեղի բնակչության բարեկեցության վրա, մարդկանց հարցրել էին՝ «Ինչպե՞ս է այստեղի լանդշաֆտը նպաստում Ձեր բարեկեցությանը: Ինչո՞րով ենք հակիրճ ներկայացնել այն ամենը, ինչ Ձեր մտքով անցնում է»:

Հարցազրույցը կարելի է իրականացնել բանավոր կամ գրավոր՝ խնդրելով մասնակիցներին ինքնուրույն լրացնել թվարկումների ցանկը:

Նյութը և գործընկերները նշում են, որ հարցազրույցի ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալը՝

1. Բոլորին նույն հարցը տալ:
2. Պարզեցնել հարցը՝ նշելով, թե որքան ընդգրկուն պետք է լինի ցուցակը: Կախված ձեր նպատակից, կարող եք սահմանափակվել 10, 15 կամ 25 առարկայով կամ պարզապես խնդրել նշել բոլոր կետերը, որ իրենց մտքով անցնում են:
3. Հարցերը պետք է լինեն ընկալումների, զգացմունքների, գիտելիքների մասին, այլ ոչ թե ինչ են նրանք օգտագործում կամ անում:
4. Գրի առնել կամ ձայնագրել պատասխանները այն հերթականությամբ և լեզվով, որով մարդիկ պատասխանում են, ճիշտ հենց այնպես՝ ինչպես նրանք խոսում են: Այս հարցում կարող է օգնել թարգմանիչը:

Սլայդ 23

Այնուհետև ցանկը վերլուծում են՝

1. Հասկանալու համար, թե որ առարկաները կամ երևույթներն են դասվում մշակութային այդ ոլորտին,

example, people generally list “mother” before “aunt,” and “aunt” before “great-aunt.”

Second, individuals who know a lot about a subject list more terms than people who know less.

Third, terms that most respondents mention indicate locally prominent items: Spanish people will probably list “tomato” and “orange” fruits more frequently and earlier than they will “coconuts” or “mangos.”

Slide 22

As mentioned before, freelist is a simple method that takes the form of a structured interview through which the interviewee provides a list of items in connection to a specific topic.

In a study led by Claudia Bieling to assess how the biophysical features of a specific area contribute towards the well-being of the local people, the interviewee was asked, “How does the landscape here contribute to your well-being? Please briefly report anything that comes to your mind.”

The interview can be conducted either orally or by asking respondents to complete the freelist themselves in writing.

During the interviews, as pointed out by Newig and colleagues, the following aspects need to be considered:

1. Ask the same question to all respondents.
2. Make the question very clear by specifying how comprehensive the list should be. You may wish to limit the list to 10, 15 or 25 items depending on your goals, or just ask to list all the items that come to mind.
3. The question should ask about perceptions, feelings, knowledge... and not about what they use or do!
4. Write down or record answers in the order they are given and in the language used, exactly as they are spoken (this is where the translator may help).

Slide 23

The list of items is then analysed to:

1. identify which items fall within that cultural domain;

2. Նշելու համար, թե այդ առարկաներից կամ երևույթներից որն է ամենակարևորը կամ այդ ոլորտում ամենացայտուն արտահայտվածը, և
3. Հասկանալու, թե գիտելիքի կամ արժեքների առումով որքան տարբերություն կա խմբի անդամների միջև:

Առաջինը վերլուծության մեջ պետք է ուշադրություն դարձնել յուրաքանչյուր առարկայի կամ երևույթի հաճախականությանը, այսինքն թե քանի անգամ է այն նշվել հարցվածների շրջանում: Շատ հաճախ կնկատեք, որ թվարկվածներից շատերը ընդամենը մեկ անգամ են նշվել: Ընդամենը մեկ անգամ նշվածները հնարավոր է վիճելի լինեն, կամ հնարավոր է բառերի ավելի հին հոմանիշներ են, անուններ են տարբեր բարբառներից կամ լեզուներից, կամ պարզապես սխալմունք են:

Պարզապես մեկ մարդու կողմից նշված առարկաների կամ երևույթների երկար ցանկը մատնանշում է, որ այդ մարդը փորձագետ է, ով հիշում է անցյալում օգտագործված տերմինները, որոնք այլևս ակտուալ չեն համայնքի բնակչության մեծամասնության համար: Որոշ թեմաներ ավելի հայտնի են, ինչպես օրինակ՝ «մրգեր»-ը, մինչդեռ որոշներից կարող են իրազեկված լինել միայն մասնագետները, ինչպես օրինակ՝ «դեղաբույսեր»-ը:

Վերլուծության երկրորդ քայլը թվարկված առարկաների դասավորվածությանը ուշադրություն դարձնելն է, այսինքն, թե ինչ հերթականությամբ են ներկայացված ցուցակում: Այս տեղեկատվությամբ հնարավոր է պարզել, թե որ առարկաներն են հակված առաջինը նշվել բոլոր հարցվածների ցուցակում:

Եվ վերջապես երրորդ քայլն է պարզել, թե որոնք են ամենակարևոր առարկաները: Այսինքն այն առարկաները, որոնք ամենահաճախ են նշված և առաջին տեղում են: Ենթադրվում է, որ որքան կարևոր և հայտնի է առարկան այդ ոլորտում, այնքան հավանական է, որ այն ավելի առաջնային դիրք ունենա ցանկում և ավելի շատ մարդիկ այն նշած լինեն: Առարկայի կարևորությունը կամ salience-ը (սելիենսը) մատնանշում է, թե որքան իմաստալից է այն և ցույց է տալիս, թե ինչ նշանակություն ունի այդ ոլորտը մի խումբ մարդկանց համար:

2. indicate which things are most important, or salient within the culture; and
3. determine the variation in the knowledge or values in question among the group asked (Quinlan 2016).

The first thing to evaluate in the analysis is the frequency with which each item has been mentioned among the respondents. Most often you will observe that many of the items are listed only once. Items mentioned only once may be questionable members of the domain or they may be older synonyms, names from different dialects or languages, or just mistakes.

A long list of items mentioned by just one person may point to an expert with memory of past terms now lost to the majority of people in the community. Some domains are more commonly known, such as ‘fruits’, while others may only be fully known by specialists, such as ‘medicinal plants’.

The second step in the analysis is to look at the ranking of the items, that is, the order in which they are listed to identify which items tend to be mentioned first by all respondents.

Finally, the third step is to identify which are the most salient items. This means the items that have been mentioned most frequently and that are also mentioned in the first few places. The assumption is that the more salient an item in a domain, the more likely it is to be mentioned sooner and by more people. The salience reflects meaningfulness and it captures the essence of what the domain means for a group of people.

Սլայդ 24

Այս օրինակում կարող եք տեսնել պտղատու այգիների տրամադրած էկոհամակարգային ծառայությունների վերաբերյալ արված freelistig-ի վերլուծությունը: Ինչպես տեսնում եք ամենից հաճախ նշված էկոհամակարգային ծառայություններն են «գեղազիտությունը» (հարցվածների 52.31%-ը), ժամանցը և մտավոր ու ֆիզիկական առողջությունը, (50,77%), սնունդ մարդկանց համար և կենսաբազմազանությունը (երկուսն էլ 47,69%): Սրանք նաև այն կետերն էին, որոնք նշվել էին առաջինը, այդ իսկ պատճառով ամենակարևորն էին:

Կարևորությունը՝ salience-ը (սելիենս) հաշվարկվում է հետևյալ կերպ. հաճախականությունը բաժանվում է հարցվողների թվին և բազմապատկվում միջինով:

Սլայդ 25

Եկեք դիտարկենք 2014 թվականին հրատարակված մի ուսումնասիրություն, որը ղեկավարել է Կլաուդիա Բիլինգը: Այս ուսումնասիրությունն իրականացնելիս կիրառվել է Freelistig-ի մոտեցումը, պարզելու համար, թե ինչպես են Գերմանիայի և Ավստրիայի չորս տարածքներում բնակչության բարօրության վրա ազդում որոշակի տարածքի կենսաֆիզիկական առանձնահատկությունները:

Ուսումնասիրությունը պարզում է՝

- Կապերը, որոնք մարդիկ տեսնում են իրենց սուբյեկտիվ բարօրության և իրենց հարազատ լանդշաֆտների միջև
- և թե ինչպես են այս կապերը տարբերվում ըստ սոցիալական խմբերի (ինչպիսիք են, օրինակ, հարցվողների խմբերը՝ ֆերմերներ, այցելուներ) և ըստ տարբեր կենսաֆիզիկական համատեքստերի՝ օրինակ՝ տարածքի բնութագիրը, ինչպիսիք են լանդշաֆտում գերակշռող առանձնահատկությունները կամ տարածքի օգտագործման ձևերը:

Սլայդ 26

2011 և 2012 թվականներին հեղինակները հարցազրույցներ անցկացրեցին 262 մասնակցի հետ: Հարցազրույցի մասնակիցներն էին ուսումնասիրության տեղանքի բնակիչներ, այցելուներ և ֆերմերներ: Հարցազրույցներն անցկացվել են տարբեր վայրերում՝ արշավների ժամանակ, գյուղի շուկայում կամ կենսոլորտի արգելոցի այցելուների կենտրոնի ավտոկայանատեղիում:

Հարցազրույցավարը նախ ներկայանում էր, այնուհետև մարդկանց հարցնում՝ «Ինչպե՞ս է տեղի լանդշաֆտը նպաստում ձեր բարօրությանը: Խնդրում ենք հակիրճ ներկայացրեք ամենը, ինչ ձեր մտքով անցնում է»:

Հիմնական հարցին պատասխանելուց հետո, մարդկանց հարցնում էին նրանց տարիքը, եթե ընթացքում չէին պարզել, և թե արդյոք նրանք բնակիչ են, ֆերմեր, թե

Slide 24

In this example you see the analysis of a freelistig of ecosystem services (ES) provided by orchard meadows. The ecosystem services that were mentioned most frequently were Aesthetics (52,31% of the respondents) Recreation and mental and physical health (50,77%) and Food for humans and Biodiversity (both 47,69%). These were also the ones that were mentioned most often in the first place and therefore were the most salient.

The salience is calculated by dividing the frequency by the number of respondents and multiplying by the mean rank.

Slide 25

Let us now look at one example of a study published in 2014 and led by Claudia Bieling that used a freelistig approach to assess how the biophysical features of a specific area contribute towards the well-being of the people in four areas in Germany and Austria.

The study investigates:

- a) the linkages that people perceive between a landscape that they are attached to and their subjective well-being and,
- b) how these linkages differ across social variables (e.g., respondent groups like farmers and visitors) and different biophysical contexts (place characteristics like dominant landscape features and land uses).

Slide 26

The authors conducted face-to-face interviews with a total of 262 respondents, including residents of the study sites, visitors, and farmers between 2011 and 2012. Interviewees were approached in various places, for example, on a hiking trail, at a village market place or at the parking lot of a biosphere reserve's visitor center.

After a brief introduction, people were asked “How does the landscape here contribute to your well-being? Please briefly report anything that comes to your mind.”

After answering the central question, people were asked for their age and, if not yet evident, if they qualify as resident, farmer or visitor.

այցելու:

Հիմնական հարցազրույցները տևում էին մեկ րոպեից էլ կարճ կամ առավելագույնը 10 րոպե: Երբեմն հարցվողները ոգևշնչվում էին և սկսում էին ավելի մանրամասն քննարկել այնպիսի թեմաներ, ինչպիսիք են լանդշաֆտի փոփոխությունները կամ թե ինչպիսին է կյանքն այդ տարածքում:

Պատասխանները կա՛մ անմիջապես գրի էին առնվում, կա՛մ էլ ձայնագրվում էին և հետո գրի առնվում:

Սլայդ 27

Հարցվողները թվարկել էին 109 պատասխան: Նրանք նշել էին 1-ից 26 տարբեր պատասխաններ, թե ինչպես է տեղական լանդշաֆտը նպաստում իրենց բարօրությանը՝ ներառելով խնդիրների մի մեծ շրջանակ, որոնք կապված են էկոհամակարգերի առանձնահատկությունների, գործողությունների, ընկալումների ու արժեքների հետ: Հեղինակները նշված բոլոր պատասխանները դասակարգել են երեք ենթախմբերի՝ լանդշաֆտի ձևեր, լանդշաֆտի պրակտիկաներ և լանդշաֆտի հարաբերություններ, որոնք կարող եք տեսնել աղյուսակում: Յուրաքանչյուր պատասխանի համար հեղինակները հաշվարկել են դրանց հաճախականությունը, հարցվողների կողմից նշված կետերի ցանկում միջին հորիզոնականը և կարևորությունը:

Ամենաընդգծված և կարևոր կետը «գեղեցկությունն» էր, որին հաջորդում էր «բնական», բնություն», «սարեր», «հանգստություն», «անտառ, ծառածածկ տարածք», «արշավ» և «կապվածություն տարածքին, զգացողություն կարծես տանն ես»:

Հարցազրույցի արդյունքները հակասական էին տարբեր առումներով՝ կախված հարցվողների խմբերից: Օրինակ՝ «տարածքին կապվածություն»-ը և «մշակում»-ը ավելի մեծ կարևորություն ունեին ֆերմերների համար, քան տեղի այլ բնակիչների և այցելուների համար: Համեմատած հարցվողների այլ խմբերի հետ, ֆերմերների հարաբերությունները լանդշաֆտի հետ ավելի հաճախ հիմնված են նյութական գործոնների վրա: Այցելուները հիմնականում նշում էին «ժամանցի, հանգստի» և «անաղարտության, ամբողջականության» կարևորությունը, որոնք ավելի հազվադեպ են նշվում ֆերմերների կամ տեղի այլ բնակիչների կողմից:

Որոշ պատասխանների համար միջինից բարձր հաշվով, թե՛ այցելուներն ու թե՛ ֆերմերները ակնհայտ գնահատում էին տեղի լանդշաֆտը, մինչդեռ բնակիչներն ավելի քիչ էին արժեքավորում այն: Օրինակ՝ և՛ ֆերմերները, և՛ այցելուները կարևորում էին «մաքուր օդը» և ընդհանուր առմամբ իրենց հարաբերությունները լանդշաֆտի հետ, իսկ բնակիչները շատ հազվադեպ էին նշում դրանք:

The core interviews lasted from less than a minute to 10 minutes; however, often respondents were inspired to subsequently elaborate on issues like landscape changes or things that make up life in the area.

Responses were either directly noted or tape-recorded and transcribed later.

Slide 27

109 items were listed by the respondents. Respondents mentioned between one and 26 different aspects of how the local landscape contributes to their well-being (on average 6.8 items) including a broad range of issues that referred to ecosystem features, activities, perceptions and values. The authors assigned all items to three subcategories: landscape forms, landscape practices, and landscape relationships, as can be seen in the table. For each item, the authors calculated frequency, mean rank within the list of all items mentioned by the respondents and salience.

The most salient item was “beauty”, followed by “naturalness, nature”, “mountains”, “tranquility”, “forest, woodland”, “hiking” and “place attachment, feeling at home.”

The interview results contrasted in several aspects. “Place attachment, feeling at home” and “cultivating”, for example, had a much higher importance for farmers than for other local residents and visitors. Compared to the other respondent groups, farmers' landscape relationships were also more often based on material factors. Visitors particularly stressed the importance of “recreation, relaxation” and “unspoilt, integrity”, which were less reported by farmers and local residents.

With above-average scores for several items, visitors and farmers exhibited a similar tendency of explicit appreciation of the local landscape, while residents expressed less acknowledgment; for instance, both farmers and visitors highlighted the role of “good air” and landscape relationships in general, whereas residents mention these rarely.

Սլայդ 28

Հեղինակները նշել էին, որ հարցազրույցները հնարավոր էր անցկացնել կարճ ժամանակահատվածում: Մասնակցելու ցանկությունը մեծ էր և մարդիկ կարծես քիչ դժվարություններ ունեին տրված խնդրի հետ: Այս մոտեցումը տրամադրեց մեծ քանակի համապատասխան տվյալներ՝ մարդկանց արժեվորած կենսաֆիզիկական առանձնահատկությունների, լանդշաֆտով զբաղվելու ձևերի մասին և բարօրության հետ կապի ընկալման մասին: Որոշ մարդիկ նշել էին, որ իրենց համար հետաքրքիր էր մտածել որոշ բարձրացված հարցերի շուրջ, և շատ հաճախ հարցերը խթան էին հանդիսանում հետազայում այդ խնդրի շուրջ ավելի խորը մտածելու համար՝ ինչպես օրինակ իրենց սիրելի լանդշաֆտի առանձնահատկությունները:

Հեղինակները եզրակացնում են, որ մոտեցման շնորհիվ հնարավոր եղավ գաղափար կազմել մի քանի կարևոր առանձնահատկությունների մասին, թե ինչպես են լանդշաֆտերը նպաստում ուսումնասիրության տարածքներում մարդկանց բարօրությանը: Այս կապերն ասոցացվում են նյութական միջավայրի կոնկրետ առանձնահատկությունների հետ, բայց միևնույն ժամանակ դրանք կարող են առաջանալ լանդշաֆտով զբաղվելու գործելակերպերից և փորձից:

Սլայդ 29

Փորձե՛ք կիրառել freelisting մեթոդը՝ ձեր գործընկերների, ընտանիքի կամ ընկերների հետ հարցազրույցներ անցկացնելով:

Սլայդ 30

Իմացե՛ք ավելին կարճ հարցազրույցների միջոցով արժեքների վերհանման մասին:

Սլայդ 31

Այս բաժնում կսովորեք, թե ինչպես պետք է հասկանալ համայնքի և տեղի շրջակա միջավայրի տարածական հարաբերությունները՝ հողօգտագործման վերաբերյալ հավանական հակասությունները բացահայտելու և տարածքի պլանավորման վերաբերյալ տեղեկացված որոշումներ կայացնելուն նպաստելու համար:

Սլայդ 32

Այս բաժնում կքննարկենք տարածական բաղադրիչը և մասնակցային քարտեզագրումը՝ ուսումնասիրելով հետևյալ բաղադրիչները.

- Տարածական բաղադրիչի դիտարկման կարևորությունը
- Մասնակցային քարտեզագրման մոտեցումների ներկայացում
- Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգ. ինչպե՞ս իրականացնել
- Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգ. օրինակ
- Գործնական կիրառություն

Slide 28

The authors highlighted how interviews could be carried out in very little time, willingness to participate was high, and people appeared to have few difficulties with the question posed. The approach delivered abundant and relevant data on appreciated biophysical features, ways of engaging with the landscape and perceived linkages to well-being. Several people reported that they found it interesting to reflect on the topic raised, and often the interview question served as a stimulus for further elaboration on issues like favorite landscape features.

The authors conclude that the approach was able to provide a very good sense of key features of how landscapes contribute to human well-being in the areas investigated. These linkages are associated with specific features of the material environment but are simultaneously prompted by practices and experiences gathered in the course of engaging with landscapes.

Slide 29

Practice Freelisting by interviewing your colleagues, friends or family!

Slide 30

Find out more about eliciting values through short interviews!

Slide 31

In this section, we will learn how to capture the spatial relationships between a community and their local environment to identify potential land use conflicts and support informed land planning decisions.

Slide 32

The spatial component and participatory mapping will be discussed with the following components:

- Importance of considering the spatial component
- Introduction to participatory mapping approaches
- Public Participation GIS. How to?
- Public Participation GIS. An example
- Practice

Սլայդ 33

Տարածքի կամ բնական ռեսուրսների կառավարման վերաբերյալ որոշումների մեծ մասը հիմնված է տարածական տեղեկատվության վրա: Երբ պլանավորում իրականացնողները որոշում են, թե ինչպես տեղաբաշխել կոնկրետ գործողությունները կամ տարածքի օգտագործման տարբերակները, ինչպիսիք են քաղաքային նոր շինությունները, հատուկ պահպանվող տարածքները, գյուղատնտեսական տարածքները և այլն, պետք է հաշվի առնել՝

- **բնական տարածական կենսաֆիզիկական ասպեկտները**, օրինակ՝ տեղագրությունը, ջրային ցանցը, երկրաբանությունը, վտանգված վայրերի առկայությունը
- ինչպես նաև **տարածական սոցիալ-տնտեսական ասպեկտները**, ինչպիսիք են տրանսպորտային ցանցը, վտանգավոր արտադրությունների վայրը, բնակավայրերը և այլն:

Այս տեղեկատվությունը տրամադրում են տարբեր ոլորտների փորձագետները՝ աշխարհագրագետները, ջրաբանները, երկրաբանները:

Արդյո՞ք պետք է հաշվի առնել նաև **տարածական սոցիալ-մշակութային ասպեկտները**: Օրինակ՝ այնպիսի տարածքները, որոնք մարդիկ կարևորում են որպես բացօթյա ժամանցի վայրեր կամ այն վայրերը, որոնք համայնքի համար հոգևոր նշանակություն ունեն, այն վայրերը, որոնք գնահատվում են բնակիչների կողմից խաղաղություն և հանգստություն ներշնչելու համար կամ էլ այն վայրերը, որոնք, ըստ տեղի բնակչության, կարևոր են տեղական էկոլոգիայի կարգավորման կամ կենսաբազմազանության պաշտպանության համար: Այս սոցիալ-մշակութային տարածական տեղեկատվությունն այնքան կարևոր է տարածքների կամ բնական ռեսուրսների կառավարման վերաբերյալ որոշումների համար, որքան վերը նշված կենսաֆիզիկական և սոցիալ-տնտեսական բաղադրիչներ: Դրանք շատ կարևոր են մարդկանց բարօրության համար: Այս տեղեկատվությունը պետք է տրամադրեն մարդիկ, քանի որ փորձագետների համար դժվար կլինի ինքնուրույն վերհանել այն: Եվ ահա այստեղ են կարևոր մասնակցային քարտեզագրման մեթոդները:

Մասնակցային քարտեզագրման մեթոդները տեղի բնակիչներին ներգրավում են տարածական տվյալների ստեղծման գործընթացում: Տվյալների հիմքում մարդկանց գիտելիքներն ու ձգտումներն են: Մասնակիցների հետ հարցում են իրականացնում և խնդրում են քարտեզի վրա տեղակայել որևէ տարածական երևույթ, օրինակ՝ իրենց սիրելի վայրերի տեղադիրքերը:

Ընդհանուր առմամբ, մասնակցային քարտեզագրման նպատակը որոշումներ կայացնելիս տեղական համայնքի և անհատների փորձագիտական տարածական գիտելիքի ներառումն է՝ այսպիսով նրանց հնարավորություն ընձեռելով մասնակցել որոշումների կայացման

Slide 33

Most of the decisions made in the management of the land and of natural resources are based on spatial information. When planners decide where to locate specific uses and activities (such as new urban developments, protected areas, agricultural areas etc), these decisions need to consider spatial natural biophysical aspects, such as the topography, the hydrological network, the geology, the existence of endangered habitats. Spatial socio-economic aspects such as the transport network, the location of dangerous industries, settlements etc. are also important to consider. This information is provided by experts in different fields, such as geographers, hydrologists, geologists.

But what about the socio-cultural spatial aspects? Such as, for example, the areas that are valued by people for outdoor recreation, or places that have a spiritual meaning for communities, or places that are valued by residents for the tranquility and relaxation they inspire. Or the areas that local people know are important for the regulation of the local ecology or for the preservation of biodiversity. This socio-cultural spatial information is equally important in land and natural resources management decisions as the bio-physical and socio-economic aspects as it is important for the wellbeing of people. This information needs to be provided by people as it can be elicited with difficulty by experts themselves. Here is where participatory mapping methods are important.

Participatory mapping methods consist of involving local groups in the creation of spatial data based on their knowledge and aspirations. Participants are surveyed and asked to locate specific spatial phenomena on a map (for example the location of their favourite place).

Overall, the goal of participatory mapping is to integrate the experiential spatial knowledge of local communities and individuals in decision making. Thereby empowering them to participate in decision making. It facilitates the representation of local people's spatial

գործընթացին: Այն նպաստում է մարդկանց տարածական գիտելիքների ներկայացմանը, ինչպես նաև աջակցում է հաղորդակցությանը և համայնքի շահերի պաշտպանությանը:

Սլայդ 34

Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգը մասնակցային քարտեզագրման մոտեցում է, որը տվյալներ հավաքագրելու, վերլուծելու և վիզուալիզացնելու համար օգտագործում է աշխարհագրական տեղեկատվական համակարգերը: Հարցվողների կողմից տրամադրված տարածական տեղեկատվությունը մուտքագրվում է աշխարհագրական տեղեկատվական համակարգում և օգտագործվում է հարցվողներին վերաբերող տարածական որոշումների կայացման մեջ:

Աշխարհագրական տեղեկատվական համակարգը կամ ԱՏՀ-ն համակարգչային համակարգ է, որն իրական աշխարհը ներկայացնում է շերտերի միջոցով: Օրինակ՝ մի շերտը կարող է ներկայացնել տեղեկատվություն գետերի մասին, մյուսը՝ բնակավայրերի մասին, մյուսն էլ կարող է ներկայացնել ճանապարհային ցանցը, բուսականությունը և այլն: Մասնակցային քարտեզագրման շնորհիվ կունենանք նոր շերտ՝ մասնակիցների կողմից նշված տեղանքներով:

Հարցից կախված՝ այդ տեղանքները կարող են, օրինակ, ներկայացնել այն տարածքները, որոնք նրանք օգտագործում են կոնկրետ նպատակով, օրինակ՝ մարդկանց հանդիպելու, զբոսնելու, կամ լանդշաֆտի գեղեցկությունը վայելելու համար: Կամ, եթե ուսումնասիրության համար կարևոր է փաստել տեղի բնակչության էկոլոգիայի վերաբերյալ գիտելիքները, քարտեզը կարող է ներկայացնել այն տարածքները, որտեղ աճում են ուտելի բույսեր կամ դեղաբույսեր:

Քարտեզագրվող տարածքների և տեղանքի կենսաֆիզիկական հատկանիշների միջև կապն ուսումնասիրելու համար վերը նշված տվյալներից կազմված շերտը հնարավոր է համադրել աշխարհագրական տեղեկատվական համակարգի տվյալների այլ շերտերի հետ:

Ընդհանուր հետազոտության նպատակն է հասկանալ, թե ինչո՞ւ են մարդիկ Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգի տարբեր հատկանիշները քարտեզագրում տարբեր աշխարհագրական տեղանքներում: Որոշ հատկանիշների դեպքում պատասխանը կարող է ակնհայտ լինել, ինչպես օրինակ ձկնորսությանը զբաղվելու վայրերի վերաբերյալ նշումներ մարդիկ կանեն ջրային տարածքում, կամ առևտուր անելու վերաբերյալ նշումները՝ առևտրային տարածքում: Այլ հատկանիշների դեպքում, ինչպիսին է, օրինակ, գեղագիտական ընկալումը, քարտեզում նշում կատարելու տրամաբանությունը կարող է ակնհայտ չլինել:

knowledge and supports communication and community advocacy.

Slide 34

Public Participation GIS is a participatory mapping approach that makes use of Geographic Information Systems to collect, analyse and visualize the data. The spatial information provided by the respondents is fed into a geographic information system (GIS) and used in spatial decision-making processes.

A geographic information system is a computer system that integrates geographic information and represents the real world through data structured in layers. For example, layers might have information about rivers, settlements, road networks, vegetation, etc. Through the participatory mapping process a new layer is created with the places mapped by participants.

Depending on the question asked, these places can represent areas people use for a specific purpose, such as meeting people, going for a walk, or enjoying the beauty of the landscape. If the interest of the study is to document the local ecological knowledge, the map might indicate areas where edible or medicinal plants grow.

This data can be overlaid with other GIS data layers to examine potential spatial relationships between the mapped locations and the bio-physical attributes of place.

The general research question seeks to understand why different PPGIS attributes are mapped in various geographic locations. For some attributes, the answer may be obvious such as a fishing activity marker being placed on a body of water or a shopping activity marker in a commercial area. For other attributes, such as perceived aesthetics, the rationale for placement may be less obvious.

Սլայդ 35

Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգը կիրառվել է տարբեր համատեքստերում. օրինակ՝ անտառների պլանավորում, ծովային կամ ափամերձ տարածքների պահպանություն, այգիների և հատուկ պահպանվող տարածքների պլանավորում, տուրիզմի զարգացման պլանավորում, գետերի պահպանություն, քաղաքային այգիների և բացօթյա տարածքների պլանավորում և էկոհամակարգային ծառայությունների չափում:

Առանձնակի կարևորություն ունի լանդշաֆտի արժեքների վերլուծության և չափման շեշտադրումը Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգում: Դրանք կարևոր են սոցիալ-էկոլոգիական համակարգերի կապը պարզելու, պահպանման և զարգացման համար տեղանքին բնորոշ ուղղորդություն տրամադրելու համար, և ընդհանուր առմամբ՝ սոցիալական օգուտ ապահովելու համար հասարակական տարածքների կառավարման ռացիոնալ հիմք ստեղծելու համար:

Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգը կարելի է կիրառել տարբեր համատեքստերում՝

- Համայնքի և հարակից տարածքների պլանավորում
- Շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների կառավարում
- Տեղի դերակատարների բացահայտման արժեքներն ու նախընտրությունները
- էկոհամակարգային ծառայությունների քարտեզագրումը
- էկոլոգիական և տեղական ավանդական գիտելիքների պահպանություն
- Անշոշափելի մշակութային ժառանգության պահպանություն
- Ապագայի պլանավորում

Սլայդ 36

Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգը հնարավոր է կիրառել տարբեր ձևերով: Այն հնարավոր է անցկացնել անհատական կերպով՝ հարցազրույցի միջոցով կամ առցանց հարցման միջոցով: Այն նաև հնարավոր է իրականացնել աշխատաժողովի համատեքստում, որտեղ մասնակիցները միասին քարտեզագրում են վայրերը:

Սլայդ 37

Հարցազրույցը հնարավոր է անցկացնել թղթե քարտեզ և կաչուն թղթեր օգտագործելով, կամ էլ առցանց հարցաշարի միջոցով: Հարցումներ ստեղծելու համար կան տարբեր առցանց հարթակներ, որոնք թույլ են տալիս քարտեզի վրա հարց ավելացնել: Պատասխաններն անմիջապես պահպանվում են հարթակի մեջ՝ ԱՏՀ ծրագրին համապատասխան ձևաչափով: Եթե հարցումն

Slide 35

PPGIS has been applied in various contexts: forest planning, marine and coastal conservation, parks and protected areas planning, tourism development, river conservation, urban parks and open space planning, and measuring ecosystem services.

Of particular importance is the focus on the measurement and analysis of landscape values in PPGIS. These are essential for identifying coupled social-ecological systems (SES), for providing place-specific guidance for conservation and development, and in general, for providing a rational foundation for managing public lands for the greatest social benefit.

Additional contexts include:

- Community and neighborhood planning
- Environmental and natural resource management
- Values and preferences of local actors identification
- Ecosystem services mapping
- Traditional ecological and local knowledge preservation
- Intangible cultural heritage preservation
- Future scenario planning

Slide 36

Public Participation GIS can be carried out in varied ways. It can be carried out individually, in a one to one interview, or through an online questionnaire. It can also be carried out in the context of a workshop where participants map places together.

Slide 37

The interview process can be done using a paper map and some stickers or it can be done using an online questionnaire. There are some online platforms for creating surveys that allow adding a question on a map. The answers are directly stored by the platform in a format that is compatible with GIS software. If the survey is carried out on paper then the facilitator has

իրականացվում է թղթի վրա, ապա հարցումն անցկացնողը պետք է ներմուծի պատասխաններն ԱՏԸ ծրագրի մեջ՝ թվայնացնելով քարտեզի վրա նշված կետերը:

Սլայդ 38

Մինչ հարցազրույց անցկացնելը պետք է հաշվի առնել մի քանի կետ: Դրանք են՝

- **Ո՞ր տարածական հատկանիշը պետք է քարտեզագրեն մասնակցինները:** Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգի մեթոդը կարող է տրամադրել տարածական տվյալների շերտեր, որոնք պարզում են, թե ինչպես են բաշխված մի շարք տարածական հատկանիշներ, ինչպիսիք են՝ գործողությունները, արժեքները, նախընտրությունները, գիտելիքը: Սովորաբար աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգով քարտեզագրվող ասպեկտներն են լանդշաֆտի արժեքները և հատուկ վայրերը, էկոհամակարգային ծառայությունները, զարգացման նախընտրությունները, ազգային պարկի փորձը, կլիմայի փոփոխության ռիսկը, տրանսպորտային միջանցքի որակները, քաղաքային այգիների և բացօթյա տարածքների արժեքները, լանդշաֆտի վիճակի մասին գիտելիքը, ժամանցի համար նախատեսված ռեսուրսները:
- **Տարածական հատկանիշը, որն ուսումնասիրության կիզակետում է գտնվում, կսահմանի, թե որ մասնակիցները պետք է ներառվեն գործընթացում:** Իր գրախոսության մեջ Բրաունը նշել էր տարածական հատկանիշների քարտեզագրման բարդության մակարդակի մասին: Նա դրանք տեղադրել էր երկու առանցքների երկայնքով՝ մեկը ճանաչողական մարտահրավերի կամ մասնակիցների համար դժվարության աստիճանի համար, մյուսը փորձառության կամ գիտելիքի համար՝ անհրաժեշտ տարածական կերպով հատկանիշը տեղադրելու համար:

Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգով էկոհամակարգային ծառայությունների քարտեզագրումը ներկայացնում է փորձագիտական ամենաբարձր գիտելիքի շեմը և ամենամեծ ճանաչողական մարտահրավերը: Սա հատկապես գործում է էկոլոգիական «կարգավորող» և «աջակցող» ծառայությունների տարածական նույնականացման համար, որի համար անհրաժեշտ է բնության համակարգերի վերաբերյալ մինիմալ ցածր մակարդակի գիտելիքներ՝ ի հավելումն տարածաշրջանային լանդշաֆտին ծանոթ լինելուն: Նմանատիպ դեպքերում հետազոտության թիրախը կարող են լինել տեղի փորձագետները և հետազոտողները:

Ի հակասումն, մասնակիցների բացահայտումն ըստ տեղանքի վրա հիմնված գործողությունների, փորձի և զարգացման նախընտրությունների, ներկայացնում է ցածր մակարդակի ճանաչողական մարտահրավեր և չի պահանջում բարձր մակարդակի տեխնիկական գիտելիքներ: Այս հատկանիշները որոշվում են ըստ ուսումնասիրության տարածաշրջանում մասնակցի

to transcribe the answers into GIS by digitizing the points on the map.

Slide 38

Prior to the interview process there are some aspects that need to be carefully considered:

- **What is the spatial attribute you want participants to map?** PPGIS methods can provide spatial data layers that identify the distribution of a wide range of spatial attributes such as activities, values, preferences, and knowledge.

Aspects that are typically mapped in a PPGIS process are landscape values and special places, ecosystem services, development preferences, national park experiences and perceived environmental impacts, climate change risks, transportation corridor qualities, urban park and open space values, and knowledge of landscape conditions, and recreation resources.

- **The spatial attribute that is at the centre of the study will determine the type of participants that need to be included in the process.** In his review, Brown looked at the level of difficulty of mapping different spatial attributes. He plotted them along two axes, one for the degree of cognitive challenge or difficulty and the other for the level of expertise or scientific knowledge required to spatially locate the attribute.

The mapping of ecosystem services in PPGIS represents the highest expert knowledge threshold and the greatest cognitive challenge. This is especially true for the spatial identification of “regulating” and “supporting” ecological services that require a minimum base-level knowledge about the functioning of natural systems in addition to familiarity with the regional landscape (Brown, Montag, and Lyon 2012). In this case local experts and researchers might be the target population.

In contrast, participant identification of place-based activities, experiences, and development preferences represent low cognitive challenge and do not require a high level of technical expertise. These attributes are identified based on a participant’s life experience living in or visiting the study region.

ապրելու կամ այցելելու փորձով:

Սլայդ 39

Ինչպե՞ս կարելի է լավագույն կերպով ներկայացնել տարածական հատկանիշը՝ օգտագործելով կետեր՝, գծեր՝, թե՛ պոլիգոններ: Ուսումնասիրություններից շատերի մեջ կետեր են օգտագործվում, քանի որ դրանք ավելի հեշտ է քարտեզագրել և վերլուծել տարածական վիճակագրությամբ:

Սլայդ 40

Աշխարհատեղեկատվական մասնակցային համակարգի տվյալների բազան պարունակում է երկու տեսակի տեղեկություն՝

- **տարածական տեղեկատվություն.** կետի, պոլիգոնի կամ գծի աշխարհագրական կոորդինատները և թե՛ ինչ է այն ներկայացնում (գետ, ժամանցի վայր համարվող տարածք կամ ձկնորսության վայր): Տվյալները ներկայացվում են shapefile կոչվող ֆայլում:
- **ոչ տարածական տեղեկատվություն.** հարցման մասնակցի մասին տեղեկատվություն (օրինակ՝ տարիքը, սեռը, զբաղվածություն), որը ներկայացվում է excel ֆայլում:

Այս երկու ֆայլերը կապված են միմյանց հետ հարցման մասնակցի նույնականացման համարով:

Սլայդ 41

Տարածական տվյալների բազայի ստեղծումից հետո հնարավոր է տարբեր տեսակի տարածական վերլուծություններ կատարել: Ամենատարածված վերլուծությունները ներառում են հետևյալ ասպեկտները՝

- Ինչպե՞ս են քարտեզագրված տարածքները տարածականորեն բաշխվում: Արդյո՞ք դրանք կենտրոնացված են կոնկրետ տարածքներում, թե՛ սփռված են:
- Կենսաֆիզիկական ինչպիսի՞ տեղեկատվությունը կարող է օգնել բացատրել տարածական այս օրինաչափությունները: Ինչպիսի՞ն է այն վայրերի հողածածկույթը, որտեղ կենտրոնացված են կետերի մեծ մասը: Արդյո՞ք այդ վայրեր հասնելը հեշտ է: Արդյո՞ք այն վայրերը, որտեղ կետեր չկան, դժվար հասանելի են: Ինչպիսի՞ն է հողօգտագործումն այնտեղ:
- Սոցիալ-մշակութային ո՞ր փոփոխականների կամ հարցվողների ի՞նչ առաձնահատկությունների միջոցով կարելի է բացատրել այս օրինաչափությունները:

Սլայդ 42

Այս հատվածում կներկայացնենք Եվրոպական հետազոտությունների նախագծի շրջանակներում կատարված մի ուսումնասիրություն, որի նպատակն էր պարզել, թե ինչ վերաբերմունք ունի գյուղական և քաղաքամերձ շրջանների բնակչությունը շրջակա միջավայրի հանդեպ:

Slide 39

How can the spatial attribute be best represented, by using points, lines or polygons? In most of the studies points are used as they are easier to map and analyze with spatial statistics.

Slide 40

The Public Participation GIS database contains information about:

- the geographic coordinates of the point, polygon or line and the attribute that it represents (a river, a place valued for recreation purposes, a place where people go fishing...) in a file that is called a shapefile.
- The respondent that has mapped that point and all associated information collected in the survey (e.g. age, gender, occupation) in an excel file.

Both files are connected by the identifier of the respondent.

Slide 41

Once the spatial database is created, different types of spatial analyses can be carried out. The most common analyses looks at the following aspects:

- How are the mapped places spatially distributed? Do they concentrate in specific areas or are they scattered all over the place?
